№ 255 ՈՒՐԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16 1901 ՈՒՐԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16 № 255

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Ը՞նչ պէտք է թողնել սկսածը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերադարձ դէպի միջին դարեր. Նամակ Մոսկվայից. Նամակ Բաթումից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կուրութեան պատճառները.

ՉԸ ՊԷՏՔ Է ԹՈՂՆԵԼ ՍԿՍԱԾԸ

Առաջիկայ փետրվար և մարտ ամիսներին Պետերբուրգում պէտք է գումարվեն համառուսական ժողովներ՝ քննելու գիւղագործութեան և տնայնագործութեան վերաբերեալ մի շարք հիմնական խնդիրներ: Կառավարչական շրջանները նպատակ ունեն Ռուսաստանի զանազան տեղերից եկած ներկայացուցիչների խորհրդակցութեամբ մշակել մի շարք գործնական միջոցներ զարգացնելու և ընդարձակելու Ռուսաստանում այդ երկու կարևոր արդիւնաբերութիւնները:

Այդ ժողովների պարապմունքների առարկաները շատ մօտ են մեր երկրի շահերին: Մենք էլ հետաքրքրված ենք գիւղագործութեան և տնայնագործութեան զարգացման խնդիրներով և նորերս, մի քանի շաբաթ սրանից առաջ, զբաղվեցինք նրանցով այն համակովկասեան ժողովներում, որոնք գումարված էին ցուցահանդէսի առիթով: Այդ ժողովներում պարզվեցին շատ հարցեր, երևան եկան բազմաթիւ էական կարիքներ և առաջարկվեցին արդիւնագործութիւնը զարգացնելու մի բանի նպատակայարմար միջոցներ:

Պէտք է ուրախանալ, որ կովկասեան ժողովներից յետոյ անմիջապէս պէտք է տեղի ունենան համառուսական ժողովներ: Այն եզրակացութիւնները, որոնց հասել են մեր ժողովները և որոնց վերաբերութեամբ անհրաժեշտ է կառավարութեան աջակցութիւնը, կարելի է զեկուցանել համառուսական ժողովներում և այդպիսով նրանց շուտափոյթ իրագործութեան համար հարթել ճանապարհը:

Վերջին ժամանակներս գանգատներ են լսվում, թէ ժողովների որոշումները յաճախ մնում են անշարժ, ընթացք չեն ստանում, գործնական հետևանքներ չեն առաջացնում: Այդ գանգատները անհիմն չեն: Մեզ յայտնի են մի քանի այդ տեսակ խոշոր փաստեր: Իսկ դա շատ անմխիթարական և վտանգաւոր երևոյթ է: Երբ որ մարդիկ տեսնեն, որ նրանց խորհրդակցութիւնը և զեկուցումների քննութիւնը ոչ մի իրական բարեփոխութիւն չը պէտք է առաջ բերեն, այն ժամանակ նրանք այլևս ոչ մի հաճոյք չեն զգայ մասնակցելու ապագայ ժողովներին, որոնք գուցէ շատ կարևոր լինեն և կոչված ազդեցութիւն ունենալու արդիւնագործութեան զարգացման վրա:

Ուստի անհրաժեշտ է, որ Թիֆլիսում եղած ժողովների քննութիւնները և որոշումները տեղ հասցնվեն օր առաջ և գիւղատնտեսական ընկերութիւնը, որ նախաձեռնել է այդ ժողովները, ամեն ջանք գործ դնէ դարձնելու նրանց արդիւնաւէտ և օգտաւէտ երկրի համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐԱԴԱՐՁ ԴԷՊԻ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

Ամառս, երբ ծանվում էր Մխիթարեան միաբանութեան երկուհարիւրամեայ յօբելեանը, Բագուի հայոց եկեղեցում Եղիշէ վարդապետ Մուրադեան հանդիսաւոր հոգեհանգիստ կատարեց Մխիթար Սեբաստացու համար: Այս առիթով ահագին ազմուկ բարձրացրին Հայաստանեայց ցիլինդրաւոր տիրացուները: Մխիթարը կաթոլիկ է, ասում էին միջին դարերի այդ զաւակները, ուրեմն եւ նրա անունը չը պիտի յիշվի մեր եկեղեցում: Եղիշէ վարդապետը ցիլինդրաւոր տիրացուների կողմից յայտարարվեց հայոց եկեղեցու դաւաճան: Հայ հոգեւորականութիւնը լուռ էր եւ մենք չը գիտենք՝ նա ել համաձայն է տիրացուների հետ թէ ոչ:

Չը մոռանանք ասել, որ այն ժամանակ, երբ մեզանում այդպէս գոռում, աղաղակում էր միջնադարեան տիրացութիւնը, ս. Ղազարի վանքում, ազգանվեր միջոցին, ծերունի Նահապետը, հ. Ալիշանը, բաժակ վերցնելով, իրան յատուկ բանաստեղծական ոգով, առաջարկում էր ամենայն հայոց Կաթողիկոսի կենացը, եւ միաբանները ոգեւորութեամբ ընդունում էին ու կեցցէներով ողջունում այդ կենացը:

Այսօր չը կայ Նահապետը: Ոչ օրի մոքով չէր անցնում, թէ հ. Ալիշանի անունն էլ արժանի չի համարվի հայոց եկեղեցում յիշատակվելու: Բայց դա մի տխուր փաստ է, որը մենք չենք կարող ծածկել: Մեզ հաղորդում են, որ մի խումբ համակրողներ, կամենալով հոգեհանգիստ կատարել տալ հ. Ալիշանի համար, դիմել են Թիֆլիսի կոնսիստորիայի նախանդամ եւ ս. Սարգսի վանահայր Գարեգին վարդապետ Յովսէփեանին, բայց նա մերժել է թոյլատրութիւն տալը:

Գիտենք որ հ. Ալիշանի անթիւ յարգողների համար չատ անախորժ պիտի լինի այս լուրը. բայց թաղցնել իրողութիւնը անկարելի ենք համարում. մենք ինքներս էլ խորին ցաւով ենք արձանագրում այս միջնադարեան անհամբերողութիւնը, որի ներկայացուցիչն է այս անգամ մի երիտասարդ վարդապետ, աստուածաբան, Գերմանիայում, այսինքն Լիւթերի հայրենիքում, ուսում առած մի մարդ:

Մեզ այստեղ հետաքրքրողը այդ աստուածաբանը չէ, մենք աւելի ողբալի փաստ ենք տեսնում այստեղ, այն որ XX դարի սկզբին մենք արագ քայլերով վերադառնում ենք դէպի միջին դարերը: Մի քանի տարի առաջ մենք այսպէս չէինք: Մեռաւ կաթոլիկ ֆրանսիացի հայագէտ Դիւլորիէ, եւ նրա համար հոգեհանգիստ կատարվեց Թիֆլիսի հայոց եկեղեցիներում: Մեռաւ մի ուրիշ հայագէտ, բողոքական անգլիացի Շրումպֆ, եւ նոյնպէս հոգեհանգիստ կատարվեց հայոց եկեղեցում:

Բանից դուրս է գալիս, որ հ. Ալիշանը, հայութեան եւ հայկական աւերակների այդ գեղեցիկ երգիչը, աւելի քիչ երախտիք ունի հայերի վրա, քան մի Դիւլորիէ, մի Շրումպֆ:

Մենք, ի հարկէ, չենք կասկածում, որ համակրողները կը դիմեն ամենայն հայոց Կաթողիկոսին եւ նա, անշուշտ, կը տայ թոյլատրութիւն հոգեհանգիստներ կատարելու: Բայց, խոստովանում ենք, այսքանն էլ բաւական չէ մեզ հանգստացնելու համար: Տարիներից ի վեր մենք տեսնում ենք, որ հայ եկեղեցին գլորվում է կղերականութեան գիրկը եւ մի քանի անշնորհք, եզուիտամիտ անհատների շնորհիւ, կորցնում է իր լայն, համակրելի, նուիրական յատկութիւնները: Մենք շարունակ բողոքել ենք այս հանգամանքի դէմ, շարունակ յարձակվել ենք ֆանատիկոսական անհամբերողութեան, եզուիտական սկզբունքներ մտցնողների վրա: Մենք տեսնում էինք, թէ ուր ենք դիմում: Եւ այսօրվայ փաստը տխուր իրականութեան մի թոյլ նմուշն է:

Մի Գարեգին վարդապետ, որքան էլ աստուածաբան եւ իշխանաւոր լինի, այնքան նկատելի մի մեծութիւն չէ, որ կարողանայ հայր Ալիշանի պէս հային զրկել հայութիւնից: Հայերը ուրիշ, աւելի շատ գեղեցիկ միջոցներ կը գտնեն իրանց Նահապետի յիշատակը յարգելու համար: Մեզ վրդովեցնողը միջնադարեան այն տեսակն է, որ այսպիսի ժամանակ միջից կէս է դառնում հային հայից անջատելու համար, որպէս զի շահված լինի կղերական փոքրոգի ու նեղսիրտ կաստան:

Դա մի կոչմար է, որ գալիս է մեզ խեղդելու: Բայց իզուր: Ասեն ինչ,—գոհութեամբ ենք արձանագրում այս փաստը,—ցոյց է տալիս, որ եթէ խեղդվող լինելու է, դա հէնց այդ կաստան է, որքան էլ նա զարդարվի գերմանական դիպլոմներով: Դիպլոմը չէ ծածկում, որ նորագոյն աստուածաբանները չարիք են հայերի համար: Երբ մենք ասում ենք այս բանը, մեզ դէմ բողոքում են, գանգատվում են: Բայց մեթէ պարզ չէ: Ամենայն հայոց Կաթողիկոսը, որ դիպլոմաւոր աստուածաբան չէ, Հայաստանի վանքերում կրթված մի հոգեւորական է, յատուկ պատգամաւոր է ուղարկում Վենետիկ, Մխիթարեաններին ողջունելու համար. իսկ նրա սաորդրեալներից մէկը, ս. Սարգսի մի վանահայր, հ. Ալիշանի հոգեհանգիստն է արգելում:

Նոյն իսկ օրինակ վերցնենք էլ չը կայ այն անիշխանութեան մէջ, որ այժմ տիրում է մեր հոգեւոր գործերում եւ որի հեղինակները, գլխաւորապէս, նոր կուրսի հոգեւորականներն են: Բայց երբեք այդ նոր կուրսականները գիտեն շողոքորթել հրապարակով, ձեւանալ տիրաբեր ու հարազատ զաւակներ:

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՑԻՑ

Նոյեմբերի 7-ին

Մոսկվայի ռուս հասարակութեան ինտելիգենտ դասակարգի համար սովորաբար հոկտեմբեր ամսից սկսվում է բարեգործութեան սեզոն, որ կայանում է զանազան հաստատութիւնների կամ ընկերութիւնների օգտին երեկոյթներ կամ կօնցերտներ տարքելում: Դրանք մեծ մասամբ լինում են յօգուտ չքաւոր ուսանողների, ուսանողուհիների կամ մի որ եւ է կրթական հաստատութեան աշակերտների: Պէտք է ասել, որ ռուս հասարակութիւնը, ի նկատի առնելով գործի նպատակը, միշտ ամենայն սիրով պատրաստ է յաճախել այդպիսի կօնցերտներին: Դրանցից ստացվում են բաւական մեծ գումարներ, որոնք մի առ ժամանակ թեթեւացնում են ուսանող տերնդի նիւթական դժուար վիճակը, ժամանակաւորապէս մոռացնել են տալիս բնակարանի, հացի եւ զանազան մեծ ու փոքր կարիքների խնդիրը եւ հնարաւորութիւն են տալիս ազատ շունչ քաշելու:

Երեկոյթի նպատակից դուրս, հասարակութեան համար առանձին նշանակութիւն ունեն երեկոյթի ծրագիրը, կօնցերտներին մասնակցող երգիչների անձնաւորութիւնը. ուստի երեկոյթ սարքողները միշտ ի նկատի ունենալով այդ՝ ամեն ջանք են դնում կօնցերտին հրաւիրել այնպիսի երգիչ-արտիստներ, որոնք սիրելի եւ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՈՒՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Մի քանի դարեր Քրիստոսից առաջ յոյն փիլիսոփայ Պլատոնն ասաց. «Աչքն աստուածների տուած ամենաազնիւ պարգեւն է»: Չէ՞ որ մենք էլ միշտ եւ ամենուրեք նոյնն ենք կրկնում, երբ ցանկանում ենք համեմատել որ եւ է մեզ համար թանգագին անձնաւորութիւն կամ իր մեր «աչքի լոյսի» հետ: «Աչքի լոյսի»—տեսողութեան կորուստը մեծ դժբախտութիւն է մարդի համար. յիշենք թէ ինչ մեծ դեր է խաղում այդ զգայարանքը մեզ շրջապատող աշխարհի մասին հակացողութիւն կազմելու գործում: «Որքան քիչ է զարգացած այդ զգայարանքը, այնքան էլ մեր հոգին քիչ է տպաւորվում եւ ստեղծագործում»—ասում է Շմիտ-Ռիմպլէր: Եւ երբ մարդ ուզում է մի այլ մարդի մեծ պատժի ենթարկել, նա զրկում է իր հակառակորդին «աստուածների պարգեւից»—տեսողութիւնից: Մարդկութեան պատմութիւնը լիքն է այդպիսի տխուր փաստերով: Սպարտացիները հանում էին իրանց գերիների աչքերը, որ ինչ է սրանք աշխատելիս իզուր ժամանակ չը կորցնեն այստեղ-այնտեղ նայելով: Դիոնիսիոս, Սիրակուզի տիրանը, իր ձեռքն ընկած գերիներին կուրացնում էր հետեւեալ կերպով.—Նա պահում էր գերիներին բոլորովին մութ բանտում եւ յետոյ յանկարծակի դուրս բերել տալիս արեգակի ճառագայթների տակ, եւ նրանք բոլորը կուրանում էին: Բիւզանդիայի Բարսեղ կայսրը 1001 թուականին հրամայեց կուրացնել 15,000 գերի ընկած բուլղար զինուորներին: Ի՞նչու հեռու գնալ. մեր հարեւան Պարսկաստանում կուրացնելը սովորական պատիժ է... Նադիր Շահը «կուրացրեց իր որդուն... Մէշէդում հանել տուեց բոլոր բնակիչների մի կամ երկու աչքերը» *):

Եթէ ի նկատի ունենանք, որ ամեն մի կոյր անկարող է ինքնուրոյն կառավարվել, որ արդի վիճակում նա անընդունակ է որ եւ է արդիւնաւոր գործ կատարելու, ուստի կոյր մարդը դառնում է հասարակութեան անօգուտ անդամ,—այն ժամանակ հասկանալի կը լինի, թէ որքան կարեւոր է կուրութեան պատճառների ուսումնասիրութիւնը: Ասելով, թէ կոյր մարդը դառնում է հասարակութեան անօգուտ անդամ, ես ի նկատի չունեմ բացառիկ դէպքերը. խօսքս ոչ կոյր Միլտօնի մասին է, որ իր աղջիկներին թելադրեց «Կորուսեալ Դրախտ» պօէման, ոչ Գալիլէի մասին, որ նոյն իսկ կուրացած ժամանակ շարունակում էր գիտական հետազօտութիւններով պարապել, ոչ ականաւոր մաթեմատիկոս-պրոֆէսոր Սանդէրսօնի մասին, որն է ծնէ կոյր էր, ոչ կոյր վիպասանուհի Ալիս Կինգի մասին, ոչ էլ մեր կոյր աշուղների մասին, որոնք իրանց պարէնը հայթայթում են պատուաբեր արհեստով: Մի կողմ թողած այդ հազւագիւտ բացառութիւնները, կոյրերի մեծամասնութիւնը ծանր բեռ է իրանց շրջապատողների համար:

Ռուսաստանում կոյրերի թիւը շատ մեծ է: Առաջին անգամ կոյրերի վիճակագրութիւնն եղել է 1886 թուականին ներքին գործերի մինիստրութեան կարգադրութեամբ: Դրանից երեւաց, որ Ռուսաստանում կան 189,909 կոյրեր, որոնցից 94,097 հոգի տղամարդիկ են, իսկ 95,830 կանայք: Կոյրերից ամենաշատը գտնվում է եւրոպական Ռուսաստանի 50 նահանգներում, 5353՝ Լեհաստանում եւ 10,774 հոգի Կովկասում: Միջին թւով իւրաքանչիւր 500 բնակչին ընկնում է մի կոյր: Կոյրերի ընդհանուր թւից 10 տոկոսը կազմում են երեխաները:

Արդ՝ ապացուցված է, որ հարիւր կոյրերից 75 հոգի (ըստ կօնի եւ Զայդլմանի) զրկվել են տեսողութիւնից շնորհիւ այն հանգամանքի, որ իր ժամանակին բժշկական օգնութիւն չեն ունեցել:

Կուրութեան պատճառները բազմաթիւ են. սակայն մենք կը խօսենք միմիայն այնպիսիների մասին, որոնցից շատերն են կուրանում եւ որոնց նախազգուշական միջոցներով կարելի է հեռացնել:

Ցաճախ մարդ կուրանում է շնորհիւ տգիտութեան. վերցնենք մի հասարակ դէպք: Ահա տիֆով (եռթալրդ) հիւանդ մի մարդ. նա առանց ուշքի ընկած է. աչքերը կիսաբաց են եւ անթարթ, ուստի նրանք արնակալում են եւ չորանալուց եղջերաթաղանթի վրա գոյանում են «խոցեր», որոնք լայնանալով եւ խորանալով ծակում են եղջերաթաղանթը եւ, ինչպէս ասում են, «աչքը դուրս է գալիս»: Սակայն այդ դժբախտութիւնը չէր պատահի, եթէ հիւանդին խնամողը շարունակ լուանար հիւանդի աչքերը, կոպերը փակէր եւ նրանց վրա դնէր մի կտոր մաքուր շոր, վրայից բամբակ եւ թաշկինակով կապէր,—այս դէպքում աչքերը չէին չորանայ եւ կը մնային անվնաս: Այդ մի դէպք է, ուր ամենահասարակ օգնութիւնը կարող է մարդի տեսողութիւնն ազատել, եթէ իմացվի վանդի էութիւնը: Բարեբախտաբար

*) «Հայոց Գրականութիւն» Լէօի. «Մուրճ» 1901 թ. № 7.

գրաւիչ են հասարակութեան համար։ Ահա այդպիսի մեծ աջողութիւն ունեցող երեկոյթներից մէկը պէտք է համարել ամսիս 3-ին ազնուականների ժողովարանում կայացած կօնցերտը յօգուտ Մոսկվայի ուսանող կանանց օժանդակիչ ընկերութեան։ Կոնցերտի կազմակերպողն էր տեղիս հայ ուսանողութեան յայտնի տիկին Մ. Տիլլենդճեան, որ իր այդպիսի դէպքերում ցոյց տուած միշտ եռանդուն աշխատութեամբ կարողացել էր կօնցերտին տալ մի այնպիսի բարձր դիրք, որ կարելի է ասել, իր թէ ծրագրով եւ թէ ունեցած նիւթական աջողութեամբ, առանձնապէս ուշադրութիւն է գրաւում։ Բաւական է ասել, որ յարգելի տիկինը կարողացել էր հրաւիրել տեղիս կայսերական մեծ թատրօնի երկու երեւելի երգիչներ պ.պ. Շալեապինին եւ Սօբինովին, որոնք այդ թատրօնի յայտնի աստղերն են եւ Մոսկվայի բնակիչների սիրելիները։ Այդ կօնցերտը, ինչպէս լսել ենք, 7,000 ր. աւելի մուտք է ունեցել։

Ամեն տարի հայ ուսանողութեան օգտին տեղի ունեցող «հայկական երեկոյթը» այս տարի նշանակված է դեկտեմբերի 9-ին։ Գրիվատոցենա պ. Վլասով, ինչպէս լսել ենք, իր վրա է առել երեկոյթի կազմակերպութեան գործը։ Նրա ուշադրութիւն ենք հրաւիրում, որ կօնցերտի հայկական №№-ները շատ լինեն. քանի անգամ անձամբ լսել ենք ռուս հասարակութիւնից շատերի տրտունջը, թէ կօնցերտը հայկականի նմանութիւն չունի, որովհետեւ համարեա ամբողջապէս կազմված է ռուս երգերից։

Ղ. Բ.

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

Նոյեմբերի 6-ին

Երբեմն ժահն էլ մեծ բարիք է։

—Լաւ էք, որ այս գիշեր խեղճ տէր-Նշանը յանկարծ վախճանվել է։

—Մի՞թէ, խեղճ մարդ.—ո՛հ, այդ ինչ ասացիք... խիղճս տանջում է ինձ։

—Ինչո՞ւ։

—Երէկ խեղճ քահանան մտաւ մեր գրասենեակը եւ սկսեց հարցնել մեր գործակատարներից մէկի տեղը, որ—ամսական են նշանակել, ինչ են արել—ասանայ, բայց եւ, գիտէք էլի, գործերի ինչ ժամանակն է, շատ կոպիտ կերպով գրասենեակից դուրս վռնդեցի խեղճին։

—Այդ մեղա չունի, միայն թէ պէտք է մի քանի ռուբլի ժողովել եւ, որպէս քահանայ, մի քիչ կարգին թաղել։

—Այո, այո, շատ լաւ էք մտածել. ահա ձեզ տասը ռուբլի. դիմեցէք մերոնց (ծանօթներին), ամենքն էլ կտան եւ մի լաւ, պատուով թաղենք։

Այս խօսակցութիւնը տեղի ունէր երկու հարուստ հայերի մէջ։ Նախընթաց օրը (ամսիս 3-ին) տէր-Նշանը իր «մուրացկանութիւնից» առն վերադառնալով, դրեթէ խեղդված ձայնով պատմել էր իր նոյնպէս թշուառ ընտանիքին յիշեալ դէպքը, ուեւրացնելով, թէ շատ ծանր ապաւորութիւն էր թողել իր վրա մեր հարուստ հայերի այդ ասիճան կոպտութիւնը։ «Մուրալն արդէն ծանր է ինձ համար, իսկ նրա հետ եւ այդքան նախատինք ու կոպտութիւն... դա արդէն անհնար է ինձ տանել»։ Եւ այս է լինում խեղճ ծերունի հօր վերջին խօսքերը։ Նա երեկոյեան վրդովված սրտով անկողին է մտնում քնելու եւ, առանց մէկին որ եւ է նեղութիւն պատճառելու, նոյն անկողնումն էլ ընդմիշտ հանդիստ առնում։ Երջանիկ մահ...

Այո, նա այժմ հանդիստ է ինքը եւ ոչ ոքի էլ անհանգստութիւն չէ պատճառում։ Հանգիստ է նա՝ դրված մի բաւական շքեղ դագաղի մէջ, իսկ վաղվան համար էլ, որքան լսեցինք, մտադիր են մի դիակառք վարձել՝ նրան պատուով թաղելու համար։ Թաղման շքեղութեան միայն մի բան կը պակասի,—այն, որ մոտագայ տեղերից—Բուքթայիսից եւ Փոթիից—քահանաները չեն բարեհաճի ներկայ գտնվելու. պատճառն ի հարկէ յայտնի է... նրա աղքատութիւնը։

Դա այն խեղճ քահանան է, ընթերցող, որի մասին մենք գրել ենք «Մշակի» № 152-ի մէջ։ Անտրոշ մուրացկանութիւնից նրան ազատած լինելու համար, տեղացիները մի տեսակ ցուցակ էին կազմել եւ տուել նրան, որ ամիսը մի անգամ շրջէր եւ ցուցակում նշանակված անձինքներից ստանար նրանց կամաւոր ամսավճարը (20 կոպ.—1 ռուբլի)։ Այդ ձեւը թէեւ իբրեւ ոչ մուրացկանութիւն ստեղծել էին խեղճ ծերունի քահանայի համար, բայց ամեն անգամ, երբ նա մտնում էր մէկից իր կամքով նշանակված գումարը պահանջելու, դարձեալ նոյն կոպիտ խօսքերը, դարձեալ նոյն արհամարհական եւ ստորացուցիչ վերաբերմունքն էր տեղի ունենում, ինչպէս եւ առաջ։

Եւ այդ դրութիւնից նրան ազատող ամենամեծ բարերարը եղաւ միայն մահը։

Գ. Գրիգորեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Զորեքշաբթի, նոյեմբերի 14-ին, Նորին Կայսերական Մեծութիւն Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնայի ծննդեան տօնի առիթով, Վրաստանի Էկզարխի եկեղեցում, պատարագից յետոյ, գոհացողական մաղթանք կատարվեց, որին ներկայ էին կովկասեան կառավարչապետ իշխան Գոլիցին, նրա օգնական գեներալ Ֆրէզէ, զինուորական եւ քաղաքացիական իշխանութիւնների ներկայացուցիչները եւ այլ պաշտօնական անձինք։ Նոյն օրը գոհացողական մաղթանք կատարվեց նաեւ հայոց ս. Նշան եկեղեցում, բողոքականների ու կաթոլիկների տաճարներում, մահմէդականների մզկիթում եւ հրէաների աղօթատանը։ Քաղաքը առաւօտանից զարդարված էր դրօշակներով, իսկ երեկոյեան լուսավորված։

—

Զորեքշաբթի, նոյեմբերի 14-ին, Թիֆլիսի Թանդօյեան եկեղեցում տեղի ունեցաւ Տ. Տ. Ստեփանէի հոգեհանգիստը։ Ներկայ էին հանգուցեալի ազգականները եւ կողմնակի յարգողները։ Հոգեւորականներից ներկայ էին ութ հոգի։ Թեմական առաջնորդի պաշտօնակատար Գարեգին վարդապետը խօսեց մի երկար ճառ, որի մէջ ցանկացաւ յայտնել այն միտքը, թէ հայերին շատ հարկաւոր են ատատուածաքաններ եւ թէ հայ լրագիրները ոչ մի գաղափար չունեն մեր ատատուածաքանների եւ առհասարակ ատատուածաքանութեան մասին։ Ճառը շատ էր երկար ու խառնաշփոթ եւ չէր վերաբերում օրվայ առիթին։ Լրագիրների դէմ յարձակումները շատ էին բարկացկոտ եւ անտեղի։ Առհասարակ յարմար չէ պօլեմիկայով զբաղվել մի այնպիսի տեղում, ուր ունկնդիրները չեն կարող ոչ հաւանութեան, ոչ պարսաւանքի ցոյց անել եւ ոչ հակաճառել ու հերքել։ Հոգեհանգստին հաւաքված էր շատ քիչ բազմութիւն։

—

Թիֆլիսում հրատարակվող «Аргонавтъ» շաբաթաթերթը նոյեմբերի 15-ից դարձաւ ամենօրեայ լրագիր։

—

«Кавказское Сельское Хозяйство» շաբաթաթերթում կարդում ենք. «Երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստրութիւնը, նպատակ ունենալով նպաստել ձիաբուծութեան զարգացմանը Կարսի շրջանում, թոյլ է տուել արօտների երկու հողաբաժին Կարսի շրջանից յանձնել երկու ձիաբոյծների՝ 800 դեսեատին Բերդիկ հողաբաժնից Կարս քաղաքում ապրող Աղալօ Ալէքսանդրեանին, իսկ 660 դեսեատին Իւխարի-Զարուշադ-Նայլոյից Կուրբան Հալի-Վալի-օղլիին։ Հողաբաժինները տուած են հետեւեալ պայմաններով.—յիշված անձերը պարտաւոր են երեք տարվայ ընթացքում հասցնել տաբունների քանակը նորմալ չափի, այսինքն 67 ձիու Ալէքսանդրեանի հողաբաժնում եւ 55 ձիու Կուրբան-Հալի-Վալի օղլու հողաբաժնում, հաշուելով մի ձիուն 12 դեսեատին։ Ձիաբոյծները պարտաւորվում են պահել արօտներում թէ ասիական եւ թէ եւրոպական ցեղի ձիեր, ինչպէս հեծնելու, այնպէս էլ լծելու համար, որոնք կարողանան բաւարարութիւն տալ զօրքի պահանջներին ձիերի վերաբերմամբ։

—

Տեղական ռուս լրագիրներին հեռագրում են Բաթումից, որ չորեքշաբթի, նոյեմբերի 14-ին, հրդեհ է ծագել Բաթումի հասարակական ժողովարանի շինութեան մէջ։ Հրդեհը լափել է համարեա ամբողջ շինութիւնը։ Ազատել հրդեհից կարողացել են միայն մի սենեակ, որտեղ տեղաւորված էր բիլիարդը։ Հասարակական ժողովարանը զետեղված էր փայտեայ միայարկ շինութեան մէջ, ծովի ափին։

—

«Аргонавтъ» լրագրում կարդում ենք. «Ներքին գործերի մինիստրութիւնը, կամենալով ծանօթանալ հայ հոգեւոր սեմինարիաների դրութեան հետ կովկասում, պահանջել է էջմիածնի սինօդից ժամանակ տեղեկութիւններ նրանց մասին»։

—

Թիֆլիսում, ինչպէս հաղորդում է «Аргонавтъ» լրագիրը, մի քանի վաճառականների ձեռներէցութեամբ, ենթադրվում է բանալ մի նոր բանկ՝ «վաճառականական բանկ» անունով։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Քաղաքային դումայի արդէն ստացել է գրադարան-ընթերցարան բանալու իրաւունքը. շուտով մեր քաղաքը կունենայ ընթերցանութեան մի տեղ էլ»։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Շաբաթ օր, ամսիս 10-ին, երեկոյեան 6 ժամին, վեց անյայտ չարագործներ, զինաւորված Բերդանի հրացաններով եւ սարճանակներով՝ մտնում են Կասպեան-Սեւ-Ծովեան ընկերութեան Բալախանիի գրատենակը հէնց այն միջոցին, երբ գանձապահը վճարում էր ծառայողների ռոճիկները, եւ մօտ 20—25 ծառայողների ներկայութեամբ վերցնում են կասայում եղած փողերը՝ մօտ 6,500 ռուբլի ու անհետանում, առանց դիմադրութեան հանդիպելու։ Աւազակների հեռանալուց յետոյ, իսկոյն ուղում են տելեֆոնով իմաց տալ եղելութեան մասին ոստիկանութեան, բայց տելեֆոնը չէ գործում, որովհետեւ թելերը վաղօրօք կտրած են լինում։ Մինչեւ այժմ դեռ ոստիկանութեան չէ աջողվել գտնելու աւազակների հետքերը»։

—

ՄՕՍԿՎԱՑԻՑ մեզ գրում են. «Մոսկվա է ժամանել գերմանական հռչակաւոր դերասանուհի Ադել Զանդրօկ, որը սկսած նոյեմբերի 10-ից կայսերական Փոքր թատրօնում կը տայ մի քանի գասարօլ-ներկայացումներ, մասնակցութեամբ տեղիս յայտնի դերասանական ոյժերի։ Ադել Զանդրօկը բէալիստական շկոլայի բեմական գեղարուեստի ամենատաղանդաւոր ներկայացուցիչներից մէկն է։ Մոսկվայի հասարակութիւնը առաջին անգամը չէ, որ տեսնում է տաղանդաւոր դերասանուհու խաղը։ Ադել Զանդրօկը առհասարակ խաղում է Դ'Անունցիօի «Ջիօկոնդա» թատերգութեան մէջ Սիլվիո Սաելլայի, իսկ «Հավլէտում»—Դանիայի իշխանի դերերը»։

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Հոկտեմբերի 12-ին, Միւշկիւրի պրիստաւ Հասան-բէկով Օրուջլի-Օբա գիւղում ապանեց բուգուղցի Մուզաֆար-Ամրահ-օղլուն, որը մի տարի է, ինչ ուսուցակութիւն է անում Ղուբայի գաւառում։ Նա իր գիւղում ապանել էր մի կնոջ եւ դատարանի ձեռքը չընկնելու համար՝ փախել էր անտառը»։

—

ԱՐԴԱՀԱՆԻՑ մեզ գրում են. «Այս տարի մեզանում չը տեսնված աչուն է։ Դեռ մինչեւ այժմ ձիւն չէ եկել, չը նայած որ անցած տարիներում հոկտեմբեր ամսից սար ու ձոր ծածկվում էին։ Եղանակները պարզ են եւ մեղմ»։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են. «Կենսական մթերքների բաւական թանգութիւն է տիրում մեզանում. մանաւանդ զգալի կերպով թանգ է միրը, որ այժմ ֆունտը ծախվում է 7 կոպէկով, մի գին, որ տարվայ այս ժամանակում նախընթաց տարիներում 5 կոպէկից աւել չէր լինում։ Շուկայի վրա հսկողութիւնը եւս շատ թոյլ է եւ ազատ. թէեւ ունենք երկու վերահսկիչներ, բայց միայն անունով են եւ շաբաթներով նրանց երեսները չենք տեսնում։ Բազարում ծախվում են խոր եւ անեփ հացեր, փտած մրգեր, հոտած պանիր եւ այլ կենսական պիտոյքներ»։

—

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶԻՑ մեզ գրում են. «Տեղիս հայերի միակ խօսակցութիւնը առաջիկայ ամ-

---

այս պատճառից քիչերն են կուրանում։

Կովկասում, ինչպէս եւ Ռուսաստանում, գիւղացիները կուրանում են գլխաւորապէս ծաղկից եւ տրախօմայից, մինչդեռ քաղաքներում կուրութեան պատճառների թւում առաջին տեղը բռնում են տեսանեարդի ծիւրութիւնը (атрофія зрительнаго нерва), աչքերի թարախային բորբոքումն եւ գլաուկոմա (սեւ ջուր)։

Մինչեւ Ժեննների գիւտը (1796 թ.) ծաղիկը կուրութեան ամենագլխաւոր պատճառն էր ամենուրեք։ Երկու աչքով հարիւր կոյրերից 35-ը տեսողութիւնից զրկվում էին ծաղկից։ Այդ հիւանդութիւնը չէ խնայում աչքի ոչ մի մաս, սակայն գլխաւորապէս նա փչացնում է եղջերաթաղանթը։ Սովորաբար երկու աչքը միասին են հիւանդանում, որ յաճախ բորբոքին կուրացնում է հիւանդին։

Ամենաիրական նախազգուշական միջոցը ծաղկի դէմ պատուաստն է։ Պարտադիր պատուաստի բարերար ազդեցութիւնը պարզ երեւում է այն երկիրներում, ուր գոյութիւն ունի մի տեղ պարտադիր, իսկ մի այլ տեղ ոչ-պարտադիր պատուաստ։ Օրինակ, մահացութիւնը ծաղկից Ռուսաստանում 100 անգամ, իսկ Աւստրիայում 85 անգամ աւելի է եղել, քան թէ Գերմանիայում, ուր ծաղկի պատուաստը պարտադիր է։ Ըստ բժիշկ Ստեֆանի՝ Գերմանիայում 100 կոյրերից 35-ը տեսողութիւնից զրկվել էին ծաղկից, մինչդեռ երկրի մէջ պատուաստ մտցնելուց յետոյ՝ 100 կոյրերից միմիայն երկուսն են ծաղկից կուրանում։ Մեզ մօտ ծաղկի պատուաստը տարածված չէ ամենուրեք եւ պարտադիր չէ. կան այնպիսի գիւղեր, ուր բոլոր երեխաները հիւանդացել են ծաղկից, ուստի հասկանալի է, թէ ինչու մեր երկրում ծաղկից կուրացածներն այնքան բազմաթիւ են։ Հայերի մէջ ծաղիկ ընկած երեխային սովորաբար չեն բժշկում, նոյն իսկ արգելում են հասարակ լուծողական անգամ տալ հիւանդին։ Այս դէպքում աւելի խստապահանջ են լինում պառաւ կանայք, որոնք խստիւ արգելում են բժշկական միջամտութիւնը, որ ծաղիկ «ման ածողին» չը բարկացնեն։ Անձամբ տեսած եմ շատ երեխաներ, որոնք կուրացել են չնորհիւ իրանց չրջապատող կանանց անողոք կամակորութեան։ Անուշադիր են թողնում եւ հիւանդի աչքերը, որոնք երկար ժամանակ փակված են մնում, որովհետեւ խոցերով ծածկված կոպերն ուռչում են։ Հիւանդապահներն երբէք չեն բաց անում երեխայի աչքերը, որ տեսնեն, թէ ինչ կայ այնտեղ։ Սակայն յաճախ եղջերաթաղանթի վրա երեւան են գալիս թարախալից խոցեր, որոնք գոյանում են այն ժամանակ, երբ մարմնի խոցերը սկսում են չորանալ։ Այդ տեսակ խոցերը փչացնում են եղջերաթաղանթը եւ պատճառ դառնում կուրութեան։

Արդ՝ ծաղկի ժամանակ անհրաժեշտ է լաւ ուշադրութիւն դարձնել հիւանդի աչքերին, օրական մի քանի անգամ լուանալ որ եւ է սխտահանիչ հեղուկով, կոպերը վազելինով կամ մաքուր իւղով օծել եւ վրան կօմպրէսներ դնել, իսկ եթէ չրջապատողները կը նկատեն, որ հիւանդի աչքերի եղջերաթաղանթը պղտորվում է, իսկոյն եւ եթ պէտք է դիմել բժշկի օգնութեան։

Մեզ մօտ մի շատ վտանգաւոր սովորութիւն կայ, որի դէմ պիտի խստիւ մաքառել։ Այդ այն է, որ երբ ծաղիկ ընկած երեխայի աչքերը սկսում են ցաւել, վերցնում են նոյն հիւանդի մարմնի խոցերի չորացած եւ փոշի դարձրած թարախը ու ածում աչքերը։ Հասկանալի է, թէ որքան վտանգաւոր է այդ տարգէտ բժշկութիւնը։

Կոյրերի մի պատկառելի տոկոս առաջացնում է «նորածին երեխաների աչքերի թարախային բորբոքումը»։ Համարեա բոլոր կոյր երեխաների կէսն այդ զարհուրելի հիւանդութիւնից են զրկվել իրանց տեսողութիւնից։ Սովորաբար երեխան հիւանդանում է ծընընդեան երրորդ կամ չորրորդ օրը։ Նախ մայրը նկատում է, որ նորածին երեխան աչքերը փակ է պահում։ Շուտով աչքերը ճպռտում են եւ թերթերունքերն իրար կպչում։ Ուռած եւ կարմրած կոպերի արանքից հոսում է պղտոր դեղնաւուն հեղուկ։ Կոպերը հետզհետէ աւելի են ուռչում, այնպէս որ երեխան այլ եւս անկարող է լինում աչքերը բաց անել, իսկ կոպերի տակից սկսում է ծորալ արդէն իսկական թարախ, որ օր օրի վրա շատանում է։ Երեխան սկսում է անհանգիստ դառնալ, տաքութիւն է տալիս, միշտ լաց է լինում եւ քիչ է քնում։ Եթէ ուզենանք իմանալ, թէ աչքի ինչ մասն է ցաւագար, հարկաւոր է զգուշութեամբ ցած քաշել ներքին կոպը, այն ժամանակ կը տեսնենք, որ կոպը ներսից ուռած է եւ կարմրած, ասես, թաւիշ լինի։ Երեխային անխնամ թողած դէպքում հիւանդութիւնը կոպերից անցնում է եղջերաթաղանթին, որի վրա երեւան կը գան խոցեր, որոնցից աչքը կարող է «ծլալ» եւ երեխային կուրացնել։ Աւելի բարեպատեհ դէպքում եղջերաթաղանթի վրա գոյանում է սպիտակ բիծ (աչքը հատ է ընկնում)։

(Կը շարունակվի)

սին տրվելիք հայկական երեկոյթն է։ Մի խումբ երիտասարդներ եռանդուն պատրաստութիւն են տեսնում։ Երեկոյթին կերգէ հայոց եկեղեցական երգեցիկ խումբը։ Խումբը բաղկացած է պետական ուսումնարանների աշակերտներից, աշակերտուհիներից, սիրողներից եւ կայսերական երաժշտական կոնսերվատորիայի ուսանողներից։ Երեկոյթը կը լինի բազմակողմանի եւ հետաքրքրական. կերգվեն հայերէն եւ ռուսերէն ժողովրդական երգեր եւ խմբական պար-երգեր։ Կը կարդացվեն բանաստեղծութիւններ եւ ազատ գրուածներ, կը նուագէ եւրոպական եւ ասիական երաժշտութիւն։ Երեկոյթը բարեգործական նպատակով է։ Ցոյս ունենք, որ Վլադիկավկազի հայերը սիրով կը վերաբերվեն հայկական երեկոյթին եւ իրանց ներկայութեամբ կը խրախուսեն խմբի անդամներին եւ ձեռնարկողներին»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Berliner Tageblatt» լրագրի Թղթակիցը գրում է Կ. Պոլսից, թէ մեծ վիզիրի պաշտօնը, որ բաց էր մնացել նախկինի մահվանից յետոյ, յանձն առնող գտնելը շատ էլ հեշտ չէր. սուլթանը չէր կարողանում մի մարդ ճարել, որ հաւանաբար ստանձնել այդ պաշտօնը։ Այն մինիստրներն եւ նահանգապետները, որոնց առաջարկվեց մեծ-վիզիրի պատուաւոր տեղը, մէկը միւսից յետոյ հրաժարվում էին այդ պատուից եւ կամ այնպիսի պայմաններ էին առաջարկում, որ սուլթանը չէր կարող եւ չէր կամենում ընդունել։ Թեկնածուներից մէկը պահանջում էր, ի միջի այլոց, հեռացնել սուլթանի յայտնի սիրելի Իզզէտ-բէյին, միւսը—հեռացնել ծովային մինիստր Հասան-փաշային եւ ներքին գործերի մինիստր Մէժդուլա-փաշային, որովհետեւ երկուսն էլ ամենամեծ կաշկերների հոչակ ունեն։ Երրորդ թեկնածուն, որին առաջարկվեց մեծ-վիզիրի պաշտօնը, պահանջեց, որ կառավարչական գործերին վերաբերեալ ֆիրմաններն եւ իրադէները անցնեն իր ձեռքով։ Այսպիսով երկար ժամանակ այդ հարցը մնում էր չը լուծված եւ մինչեւ անգամ ենթադրութիւն ծագեց, թէ սուլթանը այս բոլոր դժուարութիւնների պատճառով կը նշանակէ այդ պաշտօնի համար ժամանակաւոր կառավարիչ, որ միայն նախագահութիւն անէ մինիստրների խորհրդում։

—Ինչպէս յայտնի է հեռագիրներից, վիճաբանութիւնները ֆրանսիական պատգամաւորների ժողովում չինական փոխառութեան վերաբերմամբ ժամանակաւոր անջատումն առաջ բերին կառավարութեան եւ արմատական-սոցիալիստական կուսակցութեան մէջ։ Դրա պատճառը հիմնական տարաձայնութիւններն էին կառավարութեան եւ բիւջէտային մասնաժողովի մէջ այն վնասների վարձատրութեան վերաբերմամբ, որ կրել են կաթոլիկ միաբանութիւնները Չինաստանում։ Այդ տարաձայնութիւնները առանձնապէս սուր կերպարանք ստացան նոյեմբերի 6-ին տեղի ունեցած նիստում, որ սկսվեց ֆինանսների մինիստր Կոլիոյի ճառով։ «Ֆրանսիան,—ասաց նա,—միւս պետութիւնների նման, պահանջեց Չինաստանից վարձատրել ոչ միայն պետութեան, այլ եւ ընկերութիւնների ու մասնաւոր անձերի կրած վնասները։ Չինաստանը վճռական է, բայց նա կարող է փոխարինել մեր վնասները մաս առ մաս միայն, տարեկան հատուցումների միջոցով։ Այս հանգամանքից առաջանում է փոխառութեան անհրաժեշտութիւնը։ Բայց կառավարութեան եւ բիւջէտային մասնաժողովի մէջ ծագել է տարաձայնութիւն։ Մինչդեռ կառավարութեան կարծիքով, փոխառութիւնը պէտք է ծածկէ թէ կառավարութեան եւ թէ մասնաւոր անձերի վնասները, մասնաժողովը առաջարկում է, որ կառավարութիւնը փոխառութեան միջոցով վարձատրէ իրան միայն, իսկ ընկերութիւններին եւ մասնաւոր անձերին թողնի ստանալու կրած վնասները ի հաշիւ Չինաստանի տարեկան վճարների։ Կառավարութիւնը չէ կարող համաձայնվել մասնաժողովի տեսակէտի հետ։ Ենթադրենք, թէ Ֆրանսիացի որ եւ է մասնաւոր անձ 20,000 ֆրանկի վնաս է կրել։ Ստանալ այդ գումարը 36 տարվայ ընթացքում, տարեկան 829 ֆրանկի չափով,—շատ վատ վարձատրութիւն կը լինէր նրա համար։ Ինչ վերաբերում է մասնաւորապէս կրօնական միաբանութիւններին, որպէս ֆինանսների մինիստր, ես կարող եմ յայտնել, որ նրանց վնասների համար պահանջված վարձատրութիւնը վերաբերում է միայն աւերված ուսումնարաններին, հիւանդանոցներին եւ գերեզմանատներին»։

—Լօնդոնում տեղեկութիւններ են ստացված Կ. Պոլսից, որոնցով հերքվում են թիւրքական կառավարութեան պնդումները, թէ Այբանիայում միջոցներ են ձեռնարկված խաղաղութիւնը վերականգնելու համար։ Ֆիսամի-փաշան, Սկուտարիի նահանգապետը, հրաժարական է տուել, որովհետեւ նրա դրութիւնը անտանելի էր։ Նրա բոլոր միջնորդութիւնները զինուորական նոր ոյժեր ուղարկելու մասին մնում էին առանց հետեւանքի։ Պաշտօնից հրաժարվելիս նահանգապետը բաց է ի բաց յայտնեց, թէ անկարող է կառավարել նահանգը ներկայ պայմաններում։ Խռովայոյզ լուրեր ստացված են նաեւ Բէյրութից, որտեղ մահմեդականների եւ քրիստոնեաների մէջ տեղի են ունենում արիւնահեղ ընդհարումներ։

—Գերմանական «Reichsbote» հաղորդում է, թէ Բերլինի շրջաններում, որոնք լաւ տեղեակ են չինական գործերին, լուր է տարածվել, որ իբր չինական «քաւութեան» պատգամաւորութեան գլուխ անցած՝ Գերմանիա է եկել Վիլհելմ կայսրից հանդիսաւորապէս ներողութիւն խնդրելու ոչ չինական կայսրի եղբայր պրինց Զուն, այլ մի ինչ որ վարձված չինացի։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

13 Նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նոյեմբերի 13-ին, առաւօտեան, մեծ հրդեհ բռնկվեց Պետերբուրգի մետալական գործարանում։ Վերջնականապէս այրվեց ժողէների ահագին գաւիթը նրա մէջ գտնվող բոլոր ժողէներով։ Վնասը մինչեւ հարիւր հազար րուբլի են հաշուում։

ՎԱՐՇԱՎԱ։ Լէյբ-գվարդիայի ուլանների եւ գրոդնէնսկի հուսարների գնդերի օֆիցէրները ժամանեցին Դանցիգ, երէկ առաւօտեան 10 ժամին։ Նրանց դիմաւորեցին կայսրանում հուսարական բրիգադայի բոլոր օֆիցէրները։ Ժամը 11-ին ռուս հիւրերը այցելութիւն գործեցին 17-դ զօրաբաժնի հրամանատարին, քաղաքի կոմենդանտին, ռուսաց հիւպատոսին, արեւելեան Պրուսիայի օբէր-նախագահին եւ դիվիզիայի գեներալին։ Ժամը 12-ին ի պատիւ նրանց նախաճաշիկ կայացաւ պրուսական լէյբ-հուսարների 2-դ գնդի օֆիցէրական ժողովարանում. ժամի 2-ին նրանք այցելեցին 1813 թւի ռուսական յուշարձանը եւ ապա քաղաքի աչքի ընկնող տեղերը. 6 ժամին քաղաքը բանակէտ տուեց. 8 ժամին արվեց հանդիսաւոր ներկայացում։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ։ Նահանգական զէմստվոյի ժողովում հարց յարուցվեց պետական անասնագործական բանկ հիմնելու մասին՝ անասնագործներին եւ զէմստվոներին չրջանադարձ միջոցներ տալու համար։ Նախագիծը, զէմստվոյի ժողովի կողմից ընդունվելու դէպքում, կը ներկայացվի Պետերբուրգի անասնագործական հանձնաժողովին։

ՕՐԵՈԼ։ Նոյեմբերի 12-ի գիշերը բանտից փախան չորս տաժանակիր աշխատանքներին դատապարտվածներ, որոնցից Օրէխով երկու եղբայրները մեղադրված են Զէլենինայի սպանութեան մէջ։ Փախածները կարողացան թաքնվել։

ՄՕՍԿՎԱ։ Համալսարանի ուսանողների կէսը խնդիրք տուեցին՝ վճարից իրանց ազատելու մասին։

Մօսկվայում շարունակվում է մի հետաքրքիր դատ, որով «Помощь» ընկերութիւնից 250,000 ր. ապահովագրական պրէմիա է պահանջում Ստօլեարովի ընտանիքը, որ ապահովագրել է իր կեանքը եւ յանկարծակի վախճանվել է, ինչպէս հաստատում են ազգականները, զէնքի անզգոյշ գործածութիւնից։ «Помощь» ընկերութիւնը չէ կամենում պրէմիան տալ եւ միջնորդում է դիակը գերեզմանից հանելու որոշման համար, իմանալու թէ արդեօք այդտեղ անձնասպանութիւն չէ եղել։ Ընկերութեան խնդիրքը մերժվեց։

Ն. ազգանունով մէկը մարդասար գնացքով ճանապարհ ընկաւ դէպի Մալախովկա կայարանը, ուր ապրում է նրա ընտանիքը։ Վագոնի նոյն բաժանմունքում գտնվում էին երկու օրիորդաւոր հագնված կանայք. խօսակցութիւն ակսվեց ճանապարհորդների մէջ, եւ կանայք հիւրասիրեցին Ն.-ին քաղցրեղէններով. չուռով Ն. գլխի պտոյտ զգաց. տիկիններից մէկը Վիշնեակի կայարանում ջուր բերեց նրան. ջուրը խմելով, Ն. ուշաթափվեց եւ այդպէս հասաւ մինչեւ Կոլոմնա։ Կոնդուկտորը զարթեցրեց նրան. նա տեսաւ, որ իր ուղեկից կանայք, որոնք իջել էին կայարաններից մէկում, յափշտակել են նրա գնած բոլոր իրերը, ժամացոյցը եւ դրամները։ Ն. երեք օր հիւանդ էր զգում իրան եւ յաճախ փոխում էր։

ԿԻԵՎ։ Թոյլ է տրված Ուվարովին հրատարակել Կիեւում, Շմիդտի խմբագրութեամբ, գենզուրային ենթակայ ամենօրեայ լրագիր «Телефонъ Юго-Западнаго Края» անունով։

ՀԱԱԳԱ։ Պաշտօնական տեղեկութիւնների հաւաձայն, Թագուհին առողջացել է, թէպէտ եւ մի քանի օր նորին մեծութիւնը ստիպված կը լինի սենեակից դուրս չը գալ։

ՊԱՐԻԶ։ «Petite République» լրագիրը հրատարակեց Վուարօնի գաղտնի զեկուցումը, որը Սեմբա ստացել էր չնորհիւ անհամեստութեան։ Այդ զեկուցման համաձայն, Վուարօն հաւատացնում է, որ ֆրանսիական զօրքերը Չինաստանում անհամեմատ աւելի լաւ էին գործում ուրիշ զօրքերից, իսկ տեղի ունեցող կողոպտումները հատ հատ դէպքեր էին. զինուորներին գրգռում էին միսիոնէրները, որոնք դըրդում էին նրանց կողոպտել։ Միսիոնէրները, 300 տեղացի քրիստոնեաների ուղեկցութեամբ, 40 սայլերով գնացին պրինց Լիի պալատը, յափշտակեցին այնտեղ արծաթէ դրամների նշանաւոր գումար եւ կողոպտուին մատնակցող ծովային իւրաքանչիւր զինուորին տուեցին մինչեւ 2000 ֆրանկի չէկ. ծովային զինուորները հրաժարվում էին չէկերը տալ, որոնք, վերջ ի վերջոյ, նրանց ձեռքում մնացին. 5000 ֆրանկի մի չէկ, ինչպէս ասում են, կրում էր Ֆավիէ եպիսկոպոսի ստորագրութիւնը։

ԼՕՆԴՕՆ։ Տէյզան, Բրիտանական ջրանցքը եւ հարաւային ափի մօտ գտնվող նաւահանգիստները պաշտպանող ամրոցների կրկնազինաւորութիւնը հէնց նոր է աւարտված։ Երկու վերջին շաբաթների ընթացքում 200 հին թընդանօթները նորերով փոխարինվեցին։ Նոյնպէս շարունակվում են եռանդուն ջանքեր, որոնց նպատակն է անառիկ դարձնել հիւսիսում գտնվող բոլոր ամրութիւնները։

ԲԱԳՈՒ։ Նոյեմբերի 10-ին զինուորված յարձակում տեղի ունեցաւ կասպեան-չէրնոմորեան ընկերութեան Սաբունչիի գրասենեակի վրա. չարագործները, թալով վեց մարդ, մտան գրասենեակը, թողնելով իրանց ընկերներին բաղում։ Յափշտակված է 5437 րուբլի։ Չը նայելով ոստիկանութեան եւ կանչված կազակների ջանքերին, աւազակները փախան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նոյեմբերի 13-ին Յարեկոեսելոյում պատիւ ունեցաւ ներկայանալու Նորին Կայսերական Մեծութեան եւ յանձնելու իր հաւատարմագիրները պարսից նոր արտակարգ դեսպան Մուշիր-ուլ-Մուլկ։

14 Նոյեմբերի

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ Կրիմի թաթարների եւ չերքէզների Կ. Պոլիս գաղթելը շարունակվում է։ Երէկ ճանապարհ ընկան մօտ 300 հոգի։

ՊԱՐԻԶ։ Պատգամաւորների ժողով։ Այսօրվայ նիստում շարունակվում էր փոխառութեան նախագծի հարցի քննութիւնը։ Պատգամաւոր Գոտիէ առաջարկում է, որ «Journal Officiel»-ում հրատարակվի փոխառութիւնը հրատարակելու ծախսերի գումարը։ Ֆինանսների մինիստրը առարկում է այդ առաջարկութեան դէմ։ Գոտիէի առաջարկութիւնը ընդունվեց 293 ձայների մեծամասնութեամբ 215-ի դէմ։

Դէլկասէ հիւանդացաւ գրիպպով, եւ այդ պատճառով Կլովիս Գիւգի հարցապնդումը Հաագայի կոնֆէրէնցիայի առիթով յետաձգված է։

ՊԱՐԻԶ։ Պատգամաւորների ժողովը ընդունեց փոխառութեան վերաբերեալ օրինագծի 2-դ յօդուածը։ Վիճաբանութիւնների ժամանակ պատասխանելով Լագիի հարցապնդումին այն բանի վերաբերմամբ, թէ արեւելեան-ասիական արշաւախմբային զօրաբաժնի օֆիցէրներին որ աստիճան թոյլ էր տրված աւար ձեռք բերել, զինուորական մինիստրը ասաց, որ կառավարութիւնը կամենում էր միայն սկզբունքով որոշել, որ աւար առնելը օրէնքով արգելված է։ Սկզբունքը պահպանված կը լինի, եթէ օֆիցէրները վերադարձնէին աւարի գոնէ չնչին մասը. ինքը չէ պնդում, որ նրա ամբողջ արժողութիւնը վճարվի։ Պատերազմաւորութիւն է անում տեղի ունեցած ցաւալի երեւոյթների առիթով, բողոքելով դրանց դէմ եւ ասելով, որ նրանք ամօթաբեր են երկրի համար։ Նրան կարգի են հրաւիրում։ Վիճաբանութիւնները կը շարունակվեն հինգշաբթի։

14 Նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նոյեմբերի 14-ին, Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆեոդորովնայի ծննդեան տօնի օրը, Յարեկոեսելոյի Մեծ պալատի եկեղեցում պալատական հոգեւորական դասը պատարագ մատուցեց։ Պատարագին ներկայ էին Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէոդորովնա, Նորին Բարձրութիւն Թագաժառանգը եւ Կայսերական ընտանիքին պատկանող Անձինք։

Նոյեմբերի 14-ին, Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէոդորովնայի ծննդեան տօնի օրը, մայրաքաղաքի բոլոր եկեղեցիներում պատարագից յետոյ կատարվեցին զոհացողական մաղթանքներ։ Իսաակեվսկի տաճարում մաղթանքը կատարեց միտրոպոլիտ Անտոնի։

Ի նկատի առնելով, որ «Петербургскія Вѣдомости» լրագիրը վնասակար ուղղութիւն է ցոյց տալիս, ներքին գործերի մինիստրը որոշեց յայտնել այդ լրագրին առաջին նախազգուշացումն։

Մօսկվայից, Կիեւից, Նովգորոդից, Կալուգայից, Վիլնայից, Կովնայից, Զերնիգովից եւ Կազանից հեռագիրներ են ստացված, որոնցով հաղորդվում է, թէ այդ քաղաքներում, նոյեմբերի 14-ին, հանդիսաւոր ժաղթանքներ են կատարված Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէոդորովնայի ծննդեան տօնի առիթով։

ՎԻԼՆԱ։ Նոյեմբերի 14-ին տեղի ունեցաւ առեւտրական ուսումնարանի հանդիսաւոր բացումը։

ԶԻՏԱ։ Забайкалье» լրագրում տպագրված է ամբան Ամօնգոլօն Ուլիէրիդի ճառը, որ նա ասել է երկաթուղային գծերի միացման հանդէսի ժամանակ։ Հաղորդում եմ ճառը հատուածակի։ «Տասը տարի առաջ մենք գաղափար չունէինք երկաթուղու մասին. այժմ, երբ մենք տեսնում ենք նրան, զարմանում եւ ուրախանում ենք, թէպէտ եւ նրա տեխնիկական կազմութիւնը անբմբռնելի է մեզ համար։ Այս բանի մէջ, ինչպէս ես հասկանում եմ, գլխաւոր ոյժերն են Աստուած եւ Թագաւորը։ Երկիւղածութեամբ խոնարհվում ենք Բոգդիխանի եւ ռուսաց Մեծ Թագաւորի չնորհների առաջ, որոնք, չնորհիւ իրանց մէջ եղած սրտակից բարեկամութեան, ստեղծեցին այսպիսի մեծ գործ։ Խոնարհվում եմ արեւմուտքի հրաշալիքի առաջ։ Մեծ Չինաստանի եւ Մեծ Ռուսաստանի ապագայ սերունդները թող խաղաղ եւ հանգիստ վայելեն ճանապարհի պտուղները։ Կեցցէ մեր մեծ Բոգդիխանը, կեցցէ ռուսաց Մեծ, Սպիտակ Թագաւորը երկար, շատ երկար տարիներ»։

ԹԷՕԴՕՍԻԱ։ Նոյեմբերի վերջին Վլադիվոստոկից ապատում են հազարից աւելի զինուորների գալստեանը, որոնք պէտք է գան «Մանջուրիա» շոգենաւով։

ԿԻԵՎ։ Ռուսաց տեխնիկական ընկերութեան Կիեւի բաժանմունքի ժողովում տեղի ունեցաւ նրա նախագահ պրոֆէսոր Նիկոլայ Անդրէեվիչ Բունգէի յոբելենական հանդէսը, նրա պրոֆէսորական գործունէութեան երեսնամեակի առիթով։

ԱՍՏՐԱԽԱՆ։ Նաւթի ստացումը աւելացնելու եւ վառելիքի քանակութեան գները կանոնաւորելու նպատակով, բօրային կօմիտէը միջնորդում է ֆինանսների մինիստրութեան կապալի պուդավճարը փոխարինել բաժին վերցնելով յօգուտ գանձարանի նաւթարդիւնաբերողներից։

ԵԼԻՍԱՎԵՏՊՕԼ։ Առաջին անգամ ձիւն եկաւ, որից յետոյ երկինքը պարզեց։ Այժմ լաւ եղանակ է, թէպէտ փոքր ինչ ցուրտ է։ Լեռներում վաղուց ձիւն է նստած։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ։ Լրագիրների ասելով, յայտնի գրականագէտ Գէօրգ Բրանդէս հավաքածուից, իբրեւ պատուաւոր պարգեւ, ստացել է տարեկան 5,000 կրօնի թոշակ։ Դաւանութիւնների մինիստրը յայտնել է իր համաձայնութիւնը։

ԼՕՆԴՕՆ։ Հաստատուն Կիտչէնէրի հեռագրի Գրէտորիայից, նոկա հաղորդում է, թէ ինքը գերի է վերցրել 36 մարդ, որոնց թւում են զօրաբաժնի միրաւորված հրամանատար Ժուբէր եւ ֆէլդկօրնէտներ Վօլմարանս ու Դիաերիխս։ Սա համարեա Ժուբէրի ամբողջ զօրաբաժինն է։

Սոլսբիւրի հիւանդացել է եւ ստիպված է գուրս չը գալ սենեակից։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՊԷՅԼԷՔՋԱՊԱՅԵԱՆ

ԲԱՌՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ԴԱՒԻԹԱՐԳԷԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. Նուռատարեանց—1—12 ժ. վիրաբուժութեան, վիներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Ե. Մ. Զիկօվանցի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Ե. Ի. Գզելիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Զ. Ի. Բարանցեւանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Պ. Կորսունսկանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԻՐԻԿՈՆԵՐԸ

Ն. Ն. Ռոսոմբէկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.

Ա. Ն. Շպակովսկի—6—7 ժ. նեարդային (էլեկտրաթերապ.), վեներ. և մարթու հ.
Դ. Ա. Թարխանեանց—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ռ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.
Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Ֆ. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԲՈՒԺԱՍԵՆԵԱԿ
ԴՈԿՏՈՐ Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ

Նորագոյն ապարատներով եւ էլեկտրական մեքենաներով. մասնաւորապէս
ԲԳԻ, ՔԹԻ, ԱԿԱՆՋԻ ԵՒ ԿՐԾՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Сергіевская ул., д. 12.

Կարա-Մուրզան

խնդրում է խմբի անդամներին՝ տիկիններին, օրիորդներին եւ պարոններին՝ չնորհ բերել Աւճալեան ժողովրդական թատրոնը, կիրակի, ամսոյ 18-ին, առաւօտեան ժամը 11-ին, մի բաժանմունք համերգ երգելու համար։
1—2

ԵՐԿՐԱՉԱՓ-ԻՆԺԵՆԵՐ
Ս. ԲԱՀԱԹՐԵԱՆ

Ընդունում է երկրաչափական եւ հարթաչափական (нивеллировочныя) եւ այլ տեսակ գեոդէզիական աշխատութիւններ՝ ջուր մատակարարելու, կանալիզացիայի, առուգման, ճահիճներ ցամաքացնելու, անտառների բարեկարգութեան, լեռնային գործի, ճանապարհների եւ փողոցների շինութեան եւ կանոնաւորութեան, քաղաքային եւ այլ անշարժ կալուածքների կարգաւորութեան յատակագծի վրա գընահատական (оцѣночный сборъ) տուրքի համար, քաղաքային եւ այլ հողերի որոշումը, քաղաքային յատակագծի հաստատելը օրէնդրական կարգով եւ այլն։
ԲԱԳՈՒ, «Դիմորցովայա Նովէրներ» հիւրանոց. կամ Թիֆլիս՝ Ավճալեան փողոց, Շահբուդաղեանի տուն, № 59, բակում։
27—100

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ ԳՐԱՖԱՆՈՒԹՈՒՄ
Կամիլ Ֆլամարիոնի
ՈՒՐԱՆԻԱ
Աստղագիտ. վէպը
Թարգ. Ֆրանսերէնից Հ. Առաքելեանի
Գիններ 1 ր. 50 կ. 7—10

Удостоен. награды національной Академіи Земледѣлія, Промышленности и Торговли въ Парижѣ,
ПИСЬМЕННОЕ ПРЕПОДАВАНІЕ ДВОЙНОЙ
БУХГАЛТЕРІИ
вполнѣ замѣняющее устное преподаваніе. Условія и пробныя письма высылаю безплатно.
Плата умѣренная. Преподаватель бухгалтеріи
А. Н. ЯНКОВСКІЙ, въ Ригѣ.

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ

ժանգերը բաւացնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց
ԳՈՒԻ ԿԱԹԸ
երեսին քնքշութիւն եւ ապիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուները, տալիս է կաշուին քնքշութիւն եւ ապիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ արկղիկը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Մատակարարվում են բոլոր պարֆիւմերական եւ դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բագուում. նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Պապովի եւ Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պատով։
99—100

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ
Կիրակի, նոյեմբերի 18-ին,
կայանալու է
ՕՐ. Մ. ԲԱԲԱՅԵԱՆԻ ԿՕՆՑԷՐՏԸ

Մասնակցութեամբ պ.պ. բարիտոն Բրօջիի, ջութակահար Հաքիմեանի եւ պիանիստ Կէսնէրի։
Սկիզբը ճիշդ ժամը 9-ին
Տոմսակները՝ սկսած 3 ր. 10 կոպէկից մինչեւ 50 կ. ծախվում են բացառապէս ժողովարանի դռնապանի մօտ։ (հ. կ.) 1—2

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆՑԻ
հասցէն.—Թիֆլիս, կաթոլիկական փողոց, տ. Զուբալովի, համար 15. 1—3

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՑՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ
երգեցիկ խումբը կառավարելու համար հարկաւոր է խմբապետ. այդ պաշտօնը ստանձնել ցանկացողը, պայմանների մասին կարող է գրաւոր դիմել դպրոցի հոգաբարձութեանը։
1—2

ՈՍԿԵԳՈՑՆ ԵՒ ԱՆՈՒՇԱՀՈՑ
ՄԵՂՐ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆԻ ՄԵՂՈՒԱՆՈՑԻՑ

Ծախվում է Լերմոնտովսկայա փողոցում, Տէր-Միքայէլեանի № 3 տանը, Աբաա-Աբաղակայա հրապարակի մօտ, մուտքը գաւթից. բարձրանալ ձախակողմեան վերնայարկը։
Մեղրի պուդը—9 ռուբլի, ֆունտը—25 կոպէկ։

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ
ԳՐԱՖԱՆՈՒԹՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Ս. Էջմիածնի ծոցի օրացոյց	20 կ.	
«Շիրակ» » »	20 կ.	
» պատի »	(տախտակով)	50 կ.
Գ. ա. ք. Աղանեանի պատի օրաց.	»	50 կ.
» » ծոցի »		20 կ.
Մ. Զէյնկեանի » »		20 կ.
» » պատի »	(տախտ.)	50 կ.
» » սեղանի »		30 կ.
» » Армянскій Календарь		20 կ.

Գ. Մ. Զէյնկեանի օրացոյցների պահեստը մեզ մօտ է։ Օրացոյցներից գումարով գնողներին զիջումն կը լինի։

—

Ստացված են հետեւեալ նոր գրքերը.
«Ֆարբարի Քարոզները, Թարգմ. Ս. Մ. 1 ր.
«Սկրտաւոյ Աքոլուտիկի եկեղեցական պատմութիւն», Մ. վարդ. Տէր-Մովս. 2 ր.
«Քննական պատմութիւն ԺԹ. դարու հայ դպրութեան», Մ. Յովհաննիսեանի, հրատարակութիւն «Բանասէրի» 2 ր.
«Էպիկուրի պարէզը», Թարգ. Ա. Զ. 50 կ.
«Կրիլովի առակները», ռուսերէն, պատկերազարդ, 315 երես 15 կ.
Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «Гутенбергъ», Г. Галустяну, Лорисъ.-Меликовская, № 11. 3—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Ուրբաթ, Նոյեմբերի 16-ին, երեկոյեան ժամը 9-ին, աւագների խորհրդի որոշմամբ, նշանակված է
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
ժողովարանի անկատաճգելի կարիքների մասին խորհրդակցելու համար, Նոյեմբերի 2-ին չը կայացած ընդհանուր ժողովի փոխարէն։
(10 եւ 16 ն.) 2—2

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Օր. Սաթենիկ
ԹԵՐՄԱՋԱՆԵԱՆՑ
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ
Առաւօտեան ժամը 9—2
Երեկոյեան ժամը 5—7
Վանքի մեծ փողոց, տուն Մարտիրոսեանցի։
(հ. կ.) 21—60

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ՄԱՆԹՈՒ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Առաւօտեան ժամը 12—2
Երեկոյեան ժամը 5—6
Սօլոլակ, Բեբուտովսկայա փողոց, տ. Արարատեանի, № 41։
6—10

Թիֆլիսի Գործակատարների Փոխադարձ Օգնութեան
ՆՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

պատիւ ունի յայտնելու ի գիտութիւն Թիֆլիսի գործակատար հասայնքի՝ որ կիրակի օր, այսինքն ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-ԻՆ, ցերեկվայ ժամը 11-ին, Թիֆլիսի քաղաքային խորհրդի դահլիճում նշանակված է գործակատարների ընդհանուր ժողով, ընկերութեան վարչութիւնը կազմակերպելու եւ մի քանի կարեւոր խնդիրներ քննելու համար։
Մինչեւ ժողովի օրը՝ ընկերութեան անդամ գրվել ցանկացողները կարող են դիմել հետեւեալ հիմնադիր անդամներին.—1) Թիֆլիսի Փոխադարձ Վարկի ընկերութեան գլխաւոր հաշուապահ Վլադիմիր Լազարեվիչ Պատկովին։ 2) Թիֆլիսի Առեւտրական Բանկի գլխաւոր հաշուապահ Ալէքսանդր Քալանթարեանցին։ 3) Սերգէյ Գերասիմիչ Կաֆեանցին, իր խանութում։ 4) Եւգենիյ Պետրովիչ Սինիլնիկովին «Россійск. Обществ. Транспорт.»-ի գրասենեակում, Դվորցովայա փողոց, տուն Սարաջևի։ 5) Դաւիդ Իսայիչ Առաքելեանցին, Թելեֆոնիյ բեադ, Ցակովբեանի խանութ։ 6) Տիգրան Խօջա-Թուժանեանցին, նոյն տեղ։ 7) Արշակ Թեւեանին, Դվորցովայա փողոց, խանութ Եղբ. Այլչանցի։ 8) Ստեփան Խաչիկեանին, Աղէլխանովի Ակցիոներական ընկերութեան գլխաւոր հաշուապահ։ (չ. կ. ե. հ. չ. կ.) 4—6

Ստացել ենք Մոսկվայի յայտնի առեւտրական տուն
Ա. եւ Ր. Բոյզէնցվայգից
ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ
ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ

Թէ ապրանքի յատկութեան եւ թէ գների էժանութեան կողմից՝ ոչ ոք չէ կարող մրցել։ Ցանկացողները կարող են անձամբ համոզվել։
Ընդունում ենք նաեւ ամեն տեսակ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ, արտասահմանի եւ Ռուսաստանի կտորներից (матерія)։ Դիմել՝
ԵՂԲ. Վ. եւ Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐԻՆ
Գոլովինակի պրոսպէկտի վրա, առաջին գիմնազիայի հանդէպ։ 4—10

ԲԺԻՇԿ ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՀԵՍՏԸ
Ցանձնված է Թիֆլիսում Կենտրոնական գրավաճառանոցին,
ուր հրաւիրվում են գիմել ցանկացողները
ՆՈՐԵՐՍ ԼՈՑՍ ՏԵՍԱՆ՝

«Մարմնամարզութիւն» (25 պատկերով)—գինն է 20 կոպ., «Մարմնամարզութեան ազիւսակ-պատկերներ»—գ. 10 կ., «Փառանգականութիւն եւ դատիարակութիւն»—գ. 15 կ. եւ «Մանկավարժական հատուած զրոյցներ»—գ. 15 կ. նաեւ միւս աշխատութիւնները.—«Առողջ հոգին առողջ մարմնի մէջ»—գ. 10 կ., «Գեղձախտ—զօլոտուխա»—գ. 10 կ., «Ո՞վ է յանցաւորը»—գ. 15 կ., «Սիֆիլիս»—10 կոպ., «Մեր նեարդերը»—10 կ. եւ «Վենեերական ախտեր»—գ. 5 կոպ.։
Գրավաճառներին եւ գումարով գնողներին զիջումն է լինում։
Դիմել՝ Въ Тифлисъ. Въ Центральную книжную торговлю. 9—10

Լոյս տեսան եւ վաճառվում են
ԿԱՐԱԳԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ
1902 թ.
ՊԱՏԻ եւ ԾՈՑԻ (Շիրակ)
ՕՐԱՑՈՑՑՆԵՐԸ

Ծոցի օրացոյցը զարդարված է Գ. եպ. Սրուանձտեանի, Գամառ-Քաթիպայի, Գ. Արծրունու եւ Գ. Զանչեանի պատկերներով. ունի բոլորովին նոր հետաքրքրական յաւելուած ամենաօգտակար տեղեկութիւններով, ընդարձակ բժշկարան, հարուստ երազահան եւ նոր, զուարճալի վիճակահան։
Պատի օրացոյցի մէջ կան բարոյական խրատներ եւ ընտիր մտքեր, հայոց եւ եկեղեցական պատմութիւնից հատուածներ, բոլորովին նոր, ծիծաղաշարժ առակներ (մեծ մասամբ անտիպ), այլ եւ ժողովրդական առածներ, ժողովրդական երգեր, գիւղական լէյլէներ, ընտիր բանաստեղծութիւններ, զուարճալի հանելուկներ, շուտասելուկներ, բժշկական, արհեստագիտական եւ այլ օգտակար եւ հետաքրքիր տեղեկութիւններ։ Տախտակը չքեղ եւ ճաշակով պատրաստված է յայտնի լիտոգրաֆիայում 15 գոյնով։ Ցանկացողները մանրամասն բովանդակութիւնը տպագրված առանձին թերթով կարող են ստանալ ձրի։
Գները ամեն տեղ ծոցինը—20 կ., պատինը—50 կ., գումարով գնողներին լինում է զիջում։ Դիմել՝ Александрополь. Карапету Апиняцъ կամ Alexandrople, Karapet Apinian (Caucase)։ Ցանկացողները թող չտապեն, որ իր ժամանակին կարողանք պատուէրները ճշդութեամբ կատարել։ (Ե. չ.) 8—16



Կօնֆէտի եւ Շօկօլադի գործարան
„Փ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ“
ԹԻՖԼԻՍՈՒՄ

Առաջարկում է թարմ կարամել մրգեղէնից, մօնպանսէ, մարմէլադ, պաստիլա, զէֆիր եւ այլն։
Պատուէրներով դիմել գործարան. Պավլովսկայա փողոց, սեփական տուն, տելեֆոն № 362.
Սեփական գործարանական խանութը գտնվում է Մէյդանում, եղբ. Հէջուբեանների տանը, տելեֆոն № 772.
Մեր ապրանքները ծախվում են բոլոր կօլոնիական խանութներում։
Բագուի եւ Բագուի գաւառի համար ներկայացուցիչ է Նիկ. Սամարչեանց, Միքայէլեան փող., տ. Աշումեանի։
90—100

Дозволено Цензурою, Тифлисъ, 17 Ноября 1901 г.
Электропечатня Груз. Издат. Т—ва. В.-Ванкская ул.